



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» դեկտեմբեր 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-46/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի 07.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը «ՀՎՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին

(այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 24.11.2015թ. հայտ է ներկայացրել:

26.11.2015թ. ստացված ծանուցման համաձայն՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, քանի որ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ: Նշված ծանուցմամբ առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև երեք աշխատանքային օրվա ընթացքում 1-ին չափաբաժնի վերաբերյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ ներկայացվել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջվող բոլոր փաստաթղթերը և հիմնավորումները:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2015թ. թիվ 3 արձանագրությանը՝ Ընկերությունը նշել է, որ համաձայն վերը նշված արձանագրության՝

- 1) «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի գնային առաջարկը մերժվել է հիմնավորում չունենալու պատճառով,
- 2) «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Պետլաս» (Petlas) 235/55-R18 անվադողերը չեն համարվել համարժեք «Բրիջսթոուն» (Bridgestone) ֆիրմային անվադողերին:
- 3) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը ներկայացրած բողոքով հղում է կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին, որի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը, ղեկավարվելով վերը նշված հոդվածի պահանջներով, եզրակացրել է, որ՝

1) Ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, սահմանված չեն տեխնիկական տվյալներ, ինդեքսներ, պայմանական նշաններ՝ հիմնված միջազգային ստանդարտների ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի վրա:

2) Ընթացակարգի գնման առարկայի հատկանիշները պարունակում են պահանջ և հղում «Բրիջսթոուն» Bridgestone առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտադրողին,

3) Ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար և առաջացնում է գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Վերոհիշյալի հիման վրա Ընկերությունը գտել է, որ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի համակարգողները, կազմելով թերի և ոչ ամբողջական տեխնիկական բնութագիր և առաջացելով գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ, ինչպես նաև պարունակելով պահանջ և հղում առևտրային նշանին և կոնկրետ արտադրողին, այն դեպքում, երբ հնարավոր էր գնման առարկայի հատկանիշները ներկայացնել առանց ֆիրմային անվանման՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին չեն ներկայացրել հիմնավոր ապացույցներ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքատեսակի ոչ համարժեք լինելու վերաբերյալ: Ի հավելումն վերոհիշյալի՝ Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը, կապված «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված անվադողերի տեխնիկական հատկանիշների «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմված տեխնիկական բնութագրին անհամապատասխանության, կամ այլ կերպ ասաց, ոչ համարժեք լինելու վերաբերյալ դիրքորոշումը ոչ մի հիմնավորում չունի և նույնիսկ հիմնված չէ մասնագիտական եզրակացության վրա:

Այսպիսով, Ընկերության համար հասկանալի չէ գնահատող հանձնաժողովի դիրքորոշումը՝ կապված «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքատեսակների վերաբերյալ, քանի որ Ընկերությունը ներկայացրել է Ընթացակարգի հրավերի

տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք, որի վերաբերյալ Ընկերությունը կարող է ներկայացնել բոլոր անհրաժեշտ մասնագիտական հիմնավորումները:

Ընկերությունը իր բողոքով խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 11.12.2015թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-46/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն 10.12.2015թ. թիվ 09/6133-15 գրությամբ ներկայացրել է «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները և բողոքի վերաբերյալ իր դիրքորոշումը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ գնման ընթացակարգ կազմակերպելու նպատակն այն է, որ պատվիրատուն հնարավորություն ստանա հնարավորինս էժան գներով ձեռք բերել իրեն անհրաժեշտ որակի ապրանքանյութական արժեքներ: Պատվիրատուն նշել է նաև, որ բողոքի մեջ նշվածը, թե իբր հրավերի տեխնիկական բնութագրի մեջ հղում է կատարվել կոնկրետ ապրանքային նշանին և արտադրողին, ինչը գնումների գործընթացում առաջացրել է չհիմնավորված խոչընդոտներ, իրականությանը չի համապատասխանում, քանի որ որևէ խոչընդոտ տվյալ դեպքում ոչ մեկի համար չի առաջացել, այլ ընդհակառակը, հենց մասնակիցներին ուղղություն տալու և նրանց գործը հեշտացնելու նպատակով, որպես համարժեքության և որակական տվյալներին ներկայացվող ելակետ-ուղեցույց նշվել է, որ Պատվիրատուն ընթացակարգը հայտարարել է հատկապես «Բրիջսթոուն» (Brigstone) անվադողների որակական ցուցանիշներին համարժեք անվադողեր ձեռք բերելու նպատակով:

Դրա հետ մեկտեղ, Պատվիրատուն շեշտել է, որ չնայած Ընկերությունը ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, սակայն որևէ կերպ չի հիմնավորել, որ իր առաջարկած թուրքական «Պետլաս» (Petlas) անվադողերը իրենց որակական և տեխնիկական չափանիշներով համապատասխանում են ճապոնական «Բրիջսթոուն» (Bridgestone) անվադողերին և կարող են ծառայել իբրև համարժեք:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի հիմնավորումը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար չի համարել, քանի որ այն հաստատող ապացույցներ չեն կցվել:

Պատվիրատուն խնդրել է մերժել «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի 07.12.2015թ. ներկայացրած բողոքը:

3. ԳԲԽ-46/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-46/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.11.2015թ. թիվ 01/03.2/3300-15 գրությամբ դիմել է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ին՝ հայտնելով, որ Ընթացակարգի հրավերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «Տեխնիկական միջոցների» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է ներկայացնել վերոհիշյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, ինչը չի համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին:

3. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն 17.11.2015թ. թիվ 335ՍԿ գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի անհամապատասխանությունները շտկվել են և կատարվել է հրավերի փոփոխություն:

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ տեխնիկական բնութագիր), 1-ին չափաբաժին՝ «Անվադողեր» գնման առարկայի համար սահմանվել է Bridgestone կամ համարժեք, ձմեռային, չափսը 235/55-R18 (Chevrolet captive LT+ ավտոմեքենայի համար) և 2-րդ չափաբաժին՝ «Անվադողեր» գնման առարկայի համար՝ Bridgestone կամ համարժեք, բոլոր սեզոնների համար, չափսը՝ 265/70-R16 (2005թ. արտադր. NISSAN X-TRAIL ավտոմեքենայի համար):

5. «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 24.11.2015թ. հայտ է ներկայացրել:

6. «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնի համար առաջարկել է՝ «Պետլաս» (Petlas) 235/55-R18, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ «Պետլաս» (Petlas) 265/70-R16 ապրանքները:

7. «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 4-ով ներկայացրել է գնային առաջարկ՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է՝ 1-ին չափաբաժնի համար՝ 227,800 (երկու հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ 212,600 (երկու հարյուր տասներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2015թ. ժամը 10:30-ին կայացած նիստի արձանագրության 2-րդ կետով որոշել է առաջարկել ԴԱՐՖ» ՍՊԸ-ին ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև 1-ին չափաբաժնի համար չհիմնավորված ցածր գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումները:

9. «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն 01.12.2015թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընթացակարգի հրավերի Հավելված N 4-ի գնային առաջարկի 1-ին չափաբաժնի չհիմնավորված ցածր գնի լրացուցիչ հիմնավորում:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.12.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 03 արձանագրությամբ որոշել է՝ 1-ին չափաբաժնի համար՝ **«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժել գնային առաջարկի հիմնավորում չունենալու և «Պետլաս» (Petlas) 235/55-R18 անվադողերի՝ «Բրիջսթուն» (Brigestoune) 235/55-R18 Ֆիրմային անվադողերին համարժեք չլինելու պատճառով** և 2-րդ չափաբաժնի համար՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ **«Պետլաս» (Petlas) 265/70-R16 անվադողերի՝ «Բրիջսթուն» (Brigestoune) 265/70-R16 Ֆիրմային անվադողերին համարժեք չլինելու պատճառով:**

4. ԳԲԽ-46/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի 07.12.2015թ. բողոքը, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 10.12.2015թ. թիվ 09/6133-15 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, Կենտրոնի 16.11.2015թ. թիվ 01/03.2/3300-15 գրությունը, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 17.11.2015թ. թիվ 335ՍԿ գրությունը՝ հայտնում է հետևյալը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ **հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:**

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ

մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը սահմանում են, որ՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված

ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Կարգի 49-րդ կետով սահմանվում է, որ նույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Նույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, ***իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.11.2015թ. թիվ 01/03.2/3300-15 գրությամբ դիմել է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ին՝ հայտնելով, որ Ընթացակարգի հրավերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «Տեխնիկական միջոցների» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է ներկայացնել վերոհիշյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, ինչը չի համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը Պատվիրատուին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանով հաստատված

«Պատվիրատուների հաստատված գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման» կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետում Կենտրոնին ներկայացնել գրավոր պարզաբանումներ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն 17.11.2015թ. թիվ 335ՍԿ գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի անհամապատասխանությունները շտկվել են և կատարվել է հրավերի փոփոխություն:

Այսպիսով, Կենտրոնի համապատասխան մասնագիտական փորձաքննության արդյունքում «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում արձանագրված անհամապատասխանությունները Պատվիրատուի կողմից վերացվել են, և ներկայումս Ընթացակարգի հրավերը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժելու կապակցությամբ հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.12.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 03 արձանագրությամբ որոշվել է՝ 1-ին չափաբաժնի համար՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժել գնային առաջարկի հիմնավորում չունենալու և **«Պետրլաս» (Petlas) 235/55-R18 անվադողերի՝ «Բրիջսթոուն» (Bridgestone) 235/55-R18 Ֆիրմային անվադողերին համարժեք չլինելու հիմքով** և 2-րդ չափաբաժնի համար՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ **«Պետրլաս» (Petlas) 265/70-R16 անվադողերի՝ «Բրիջսթոուն» (Bridgestone) 265/70-R16 Ֆիրմային անվադողերին համարժեք չլինելու հիմքով:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ որոշման ուսումնասիրությունից երևում է, որ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատասխանություն արձանագրելով՝ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն չի նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ Կարգի 49-րդ կետի ուղղակի պահանջն է հանդիսանում այն, որ հրավերի պահանջներին՝ տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունների արձանագրելու դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

արձանագրության մեջ պետք է մանրամասնորեն նկարագրի հիշյալ անհամապատասխանությունները: Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պետք է պարունակի հայտի մերժման հիմնավորումը:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ Պատվիրատուն չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետի պահանջները, այն է՝ չի հիմնավորել Ընկերության հայտի մերժումը, ուստի գտնում ենք, որ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի՝ «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2015թ. թիվ 03 արձանագրությունը դադարեցնելու մասին պահանջը ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջին, ապա անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու որոշում կայացնելու լիազորություն չունի:

Այսպիսով, ղեկավարվելով վերոհիշյալով, առաջարկում ենք «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի 07.12.2015թ. բողոքը բավարարել մասնակի:

1. «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2015թ. թիվ 03 արձանագրությամբ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը բավարարել:

2. Ընկերությանը «ՀԿՓԲԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-46/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան